«Ստեղծագործական միությունների» ձևավորումը, գործունեությունը և փոխակերպումները Հայաստանի խորհրդային և անկախության շրջանում

Մուրադյան Հ. Մ.
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
մշակութաբանության ամբիոնի ասիստենտ (Երևան, Հայաստան)
haykuhi.muradyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ Խորհրդային Հայաստան, ստեղծագործական միություն, պրոլետարական/խորհրդային մշակույթ, սոցռեալիզմ, կապիտալների փոխակերպում, խորհրդային մտավորականություն, հետխորհրդային փոխակերպումներ

«Творческие союзы»: формирование, деятельность и трансформация в советской и постсоветской Армении

Мурадян А. М.
Исторический факультет Ереванского государственного университета
Ассистент кафедры культурологии (Ереван, Армения)
haykuhi.muradyan@gmail.com

Резюме: Творческие союзы были созданы для наблюдения за деятельностью «советской интеллигенции» и для того, чтобы все сферы культуры развивались по предсказуемому пути с точки зрения государственной идеологии. Формирование творческих союзов в 1930-х и 40-х годах стало инструментом установления тоталитарной системы Советского Союза. В любом обществе интеллигенция является важным фактором развития общества, поэтому советские власти использовали этот фактор в политических интересах.
Целью данной статьи является представление политической, социокультурной роли и функций творческих союзов, а так же их преобразований в Советской и постсоветской Армении.
Реализация этой цели предполагает изучение следующих вопросов:
Первое: формирование и функции творческих союзов в Советской Армении (предпосылки создания творческих союзов, формирования инфраструктур, их роль и значение в создании советской (пролетарской) культуры, возможные трансформации форм "капитала" и методов творческого и их административная деятельность).
Второе: идеологические и функциональные преобразования творческих союзов в постсоветской Армении (изменение социального статуса от государственных институтов к общественным организациям, свободные от государственного контроля демократические отношения, новые условия для выживания, новый опыт культурного рынка и т. д.).
Ключевые слова: Советская Армения, творческий союз, пролетарская / советская культура, соцреализм, конвертация «капиталов», советская интеллигенция, постсоветские трансформации

“Creative Unions”: formation, activity and transformation in Soviet and post-Soviet Armenia

Muradyan H.M.
YSU, Facultuy of History, Department of Cultural Studies (Yerevan, Armenia)
haykuhi.muradyan@gmail.com

Abstract: The creative unions were set up to oversee the activities of the "Soviet intelligentsia" and to keep all branches and spheres of culture developing on a predictable path from a state ideology standpoint. The formation of the Creative Unions in the 1930s and 40s became the tools for the establishment of a totalitarian system of the Soviet Union. In any society, the intelligentsia is an important factor for the development of society, so the Soviet authorities used this factor for political interests.
The purpose of this article is to present the political, socio-cultural role, functions and transformations of Creative Unions in Soviet and post-Soviet Armenia.
Implementation of this goal involves examining the following issues:

First: formation and functions of Creative Unions in the Soviet Armenia (preconditions for the creation of creative unions, formation of infrastructures, their role and importance in creating Societ (proletarian) culture, possible transformations of forms of "capital" and methods of creative and administrative activities).
Second: The ideological and functional transformations of Creative Unions in post-Soviet Armenia (change of social status from state institutions to non-governmental organizations, free democratic relations from state control, new conditions for surviving, new cultural market experiences, etc).
Key words: Soviet Armenia, Creative Union, proletarian / soviet culture, social realism, covertations of “capitals”, Soviet intelligentsia, post-Soviet transformations

Մուտք

Ստեղծագործական միությունները[1] ձևավորվեցին «խորհրդային մտավորականության[2]» գործունեությունը վերահսկելու և մշակույթի բոլոր ճյուղերի ու ոլորտների զարգացումը պետական գաղափարախոսության տեսանկյունից կանխատեսելի ճանապարհի վրա պահելու համար: Ստեղծագործական միությունների ձևավորումը 1930-40-ական թվականներին Խորհրդային միության ամբողջատիրական համակարգի կայացման գործիքները դարձան: Ցանկացած հասարակությունում մտավորականությունը հասարակության զարգացման կարևոր գործոն է, ուստի խորհրդային իշանությունները այդ գործոնը «պետականացնելով» սկսեցին այն օգտագործել քաղաքական շահերից ելնելով:

Հոդվածի նպատակն է ներկայացնել ստեղծագործական միությունների քաղաքական և սոցիալ-մշակութային դերակատարությունը, գործառույթները և դրանց փոխակերպումները խորհրդային և հետխորհրդային Հայաստանում:

Սույն նպատակի իրականացումը ենթադրում է հետևյալ խնդիրների քննությունը.

առաջին. ստեղծագործական միությունների ձևավորումը և գործունեությունը խորհրդային շրջանում (ստեղծագործական միությունների ձևավորման նախադրյալները, ենթակառուցվածքների կազմավորումը, հիմնական նպատակը, կանոնադրությունը, «կապիտալների»[3] հնարավոր փոխակերպումները, ստեղծագործական և վարչական գործունեության ձևերը և մեթոդները),

երկրորդ. հետխորհրդային Հայաստանում ստեղծագործական միությունների բովանդակային և գործառութային փոխակերպումները (սոցիալական ստատուսի փոփոխությունը՝ պետական կառույցներից մինչև հասարակական կազմակերպություններ, պետական անմիջական վերահսկողությունից ազատ դեմոկրատական հարաբերություններ, գործունեության նոր պայմաններ, շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ մշակութային նոր շուկայի ձևավորման փորձեր):

Ստեղծագործական միությունների ձևավորումը

Որպես կանոն, ամբողջատիրական համակարգերը մշակույթն իր տարբեր ճյուղերով դիտարկում են պետական-քաղաքական գաղափարների քարոզչական գործիք, ուստի մշտապես պահում են տեսանելի և վերահսկելի դաշտում: Մշակույթի միջոցով նոր գաղափարների տարածումը, պարտադրումը, նոր արժեքների ստեղծումը, պետական քաղաքականության անքակտելի մասն են կազմում: Կենտրոնացված մշակութային քաղաքականությունը ավտորիտար համակարգերում պետական քաղաքականության անբաժան մասն է և մշտապես իշխանությունների ուշադրության կենտրոնում է գտնվում [**13**]: Նմանատիպ քաղաքականություն էր տարվում նաև Խորհրդային միությունում հատկապես «ստալինյան

[1] Տվյալ հոդվածում «ստեղծագործական միություններ»-ի տակ նկատի են առնված ստալինյան քաղաքականության արդյունքում ձևավորված ստեղծագործական միությունները, որոնք իրենց գոյությունը պահպանեցին մինչ մեր օրերը՝ դեմ առնելով բազմաթիվ ներքին և արտաքին խնդիրների: Հայաստանի երրորդ հանրապետությունում ձևավորված նոր ստեղծագործական կազմակերպություններին նպատակ ունենք անդրադառնալ մեկ այլ առիթով:

[2] Խորհրդային մտավորականությունը ձևավորվեց երկու փուլով. առաջին փուլն ընդգրկում է 1920-25 թվականները, երբ Ալ. Մյասնիկյանի ջանքերով Խորհրդային Հայաստան վերադարձան հայ մշակույթի այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք էին Մարիտրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Արամ Խաչատրյանը, Հակոբ Մանանդյանը, Լեոն, Հր. Աճառյանը, Գր. Ղափանցյանը, Մ. Աբեղյանը, Ալ. Թամանյանը, Թ. Թորոմանյանը ա այլոք (մանրամասն տե՞ս՝ Հարությունյան Ա., Ալեքսանդր Մյասնիկյանը և երկրորդ հանրապետության կայացումը, «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (59), 2015 թ., էջ 38): Հին մտավորականներից բոլորը չէ, որ ընդունում էին խորհրդային կարգերը և նրա գաղափարախոսությունը, բայց Ալ. Մյասնիկյանի քարոզչության շնորհիվ նրանցից շատերը վերադարձան հայրենիք այստեղ աշխատելու և ստեղծագործելու նպատակով: Խորհրդային մտավորականության ձևավորման երկրորդ փուլն սկսվեց 1925 թվականից և հստակ դիմագիծ ստացավ հատկապես 1928 թվականից սկսած, երբ խորհրդային իշխանությունների գլուխ անցավ Ի. Ստալինը: Խորհրդային ամբողջատիրական համակարգը թելադրում էր, թե ինչպիսին պետք է լինի խորհրդային գրողը, խորհրդային նկարիչը, ինչի մասին պետք է ստեղծագործի, ինչ գաղափարներ պետք է արմատավորի հայ հասարակության մեջ: Խորհրդային մշակույթի առաջին պրոլետար գրողը դարձավ Հակոբ Հակոբյանը (Suny G. R., Looking toward Ararat, p. 25):

[3] «Կապիտալ» եզրույթի տակ նկատի ունենք Պ. Բուրդեի առաջարկած կապիտալի տեսակները՝ սոցիալական, նյութական և սիմվոլիկ: Մանրամասն տե՞ս՝ [**9**, с. 60-75].

շրջանում» (1928-1953 թվականներ)[4]: Այս համատեքստում էլ ձևավորվեցին ստեղծագործական միությունները. մասնավորապես՝ ԽՄԿԿ Կենտկոմի 1932 թվականի ապրիլի 23-ի «Գրական և գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» [**12**, стр. 172-173] որոշման համաձայն, որում նշվում է. «Կենտրոնական կոմիտեն հայտարարում է, որ վերջին տարիներին սոցիալիստական շինարարության մեջ զգալի հաջողությունների շնորհիվ ձեռք է բերվել գրականության և արվեստի քանակական և որակական մեծ աճ: Մի քանի տարի առաջ, երբ գրականության մեջ օտար տարրերի զգալի ազդեցություն կար, հատկապես ՆԷՊ-ի առաջին տարիներին, պրոլետարական գրականության կադրերը դեռևս թույլ էին, կուսակցությունը ամեն կերպ նպաստում էր ստեղծել և ամրապնդել հատուկ պրոլետարական կազմակերպություններ գրականության բնագավառում և պրոլետարական գրողների և արվեստագետների դիրքերը: Այսօր, երբ պրոլետարական գրականության և արվեստի կադրերն արդեն աճել են, առաջ են եկել նոր գրողներ և նկարիչներ գործարաններից, կոլխոզներից, գործող պրոլետարական գրական-գեղարվեստական կազմակերպությունների շրջանակները նեղացել են և խոչընդոտում են գրական և գեղարվեստական գործունեությանը: Այս հանգամանքը ստեղծում է վտանգ, որ այս կազմակերպությունները կարող են մեկուսացվել և չներառել այն գրողներին և նկարիչներին, ովքեր աջակցում են սոցիալիստական շինարարությանը»:

Սույն որոշման մեջ նշվում է, որ անհրաժեշտություն է դարձել վերակազմել գրական և գեղարվեստական կազմակերպությունները, ստեղծել նոր միություններ, որոնք կներառեն բոլոր արվեստագետներին: «Այդ հիմքով կենտրոնական կոմիտեն որոշում է.

- լուծարել պրոլետարական գրողների միությունը,
- միավորել բոլոր գրողներին, որոնք սատարում են խորհրդային իշխանության քաղաքականության կայացմանը և ձգտում են մասնակցել սոցիալիստական շինարարությանը, խորհրդային գրողների միասնական միության մեջ ընդգրկելով կոմունիստական խմբակցության մեջ.
- նման այլ փոփոխություն կատարել արվեստի այլ ճյուղերում (երաժիշտների, կոմպոզիտորների, արվեստագետների, ճարտարապետների եւ այլն) կազմակերպություններ;
- գործնական միջոցներ մշակել՝ այս որոշման կատարման համար» [**12**, стр. 173]:

Այս որոշմանը հետևեց 1932 թվականի մայիսի 7-ի ԽՄԿԿ Կենտկոմի կազմբյուրոյի որոշումը «Գրական և գեղարվեստական կազմակերպությունների վերակզմմանն ուղղված միջոցառումների մասին» [**12**, стр. 175-176], որտեղ սույն որոշման տարածումը միութենական հանրապետություններում, այդ որոշման իրականացմանն ուղղված քայլերի մշակումը դարձավ կարևորագույն խնդիր:

Խորհրդային Հայաստանում գրական-գեղարվեստական միությունների վերակազմման մասին համապատասխան որոշումն ընդունվեց նույն թվականի մայիսի 12-ին [**4**] : Սույն որոշման բովանդակությունը բառացիորեն կրկնում էր ԽՄԿԿ Կենտկոմի 1932 թվականի ապրիլի 23-ի «Գրական և գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» [**12**, стр. 172-173] որոշման հիմնավորումները՝ ստեղծագործական միությունների ձևավորման անհրաժեշտության առաջնային հանգամանք համարելով արդեն գործող նախկին մշակութային կառույցների անօգտակարությունը[5]: Այս որշման հիման վրա ստեղծվեցին Խորհրդային Հայաստանի ստեղծագործական միությունները՝ գրողների[6] (1934), նկարիչների

---

[4] Խորհրդային մշակութային քաղաքականության առաջին փուլը, որն ընդգրկում է 1920-ական թվականները, բնորոշվում են ազատական մոտեցումներով, փորձ էր արվում զարգացնել խորհրդահայ մշակույթը խրախուսելով և աջակցելով հայ մշակույթի գործիչներին (օր. Ալ. Մյասնիկյանի ջանքերով լուսավորության ժողկոմատին կից ստեղծվեց գրական-գեղարվեստական ֆոնդ՝ մշակույթի գործիչների նյութական հարցերը լուծելու համար): Այս շրջանը որոշ տեսաբաններ (Փանոսյան, Գր. Սյունի) բնորոշում են որպես խորհրդային մոդեռնիզացիայի փուլը, որը ավարտվեց Ի. Ստալինի իշխանության գալով:

[5] «Խորհրդային Հայաստանի արվեստի և գրականության պրոլետարական կազմակերպությունները պրոլետ-գրականության և արվեստի զարգացման, գրական նոր կադրերի առաջքաշման և թշնամի իդեոլոգների ազդեցության դեմ պայքարելու գործում նշանակալից աշխատանք են կատարել: Սակայն եթե մինչև վերջին տարիները պրոլետ□ գրական կադրերիը քիչ էին և թույլ, առկա էր գրական խորթ տարրերի աչքի ընկնող ազդեցությունը□□□, և կուսակցությունը ամեն կերպ նպաստում էր պրոլետարական գրողների և արվեստագետների հատուկ կազմակերպությունների ստեղծմանը և ամրացմանը, ապա այժմ, երբ ավարտված է սոցիալիզմի հիմքի կառուցումը Խորհրդային միության մեջ, սոց. տնտեսության և կուլտուրայի բնագավառներում տեղի են ունեցել հսկայական տեղաշարժեր, աճել են գրական նոր կադրեր բանվոր դասակարգի և կոլտնտեսությունների առաջավոր ջոկատներից, □□□-զարգացման ներկա շրջանում պրոլետ-գրականության և արվեստի գոյություն ունեցող կազմակերպությունների շրջանակներն արդեն իսկ նեղ են դառնում և արգելակում են գրական գեղարվեստական ստեղծագործությունների նոր թափի ծավալմանը: Այս հանգամանքը վտանգ է ստեղծում գոյություն ունեցող կազմակերպությունները վերածել խմբակային ինքնամփոփ միջոցի:

[6] Թեև խորհրդային կարգեր հաստատվելուց անմիջապես հետո Հայաստանում հիմնվել ու գործել են բազմաթիվ գրական կազմակերպություններ («Հայ գրողների

(1932), կոմպոզիտորների (1932), ճարտարապետների (1932)[7] և նրանց կից պետական մամուլը, որը պետք է լուսաբաներ այս միությունների գործունեությունը:

Ստեղծագործական միությունների նպատակները և խնդիրները, կանոնադրությունը և գործունեությունը

Ստեղծագործական միությունների ձևավորումը Ի. Ստալինի իշխանության տարիներին կապված էր «կոմունիստական շինարարության» հետ, խորհրդային մշակույթի ձևավորման և խորհրդային «ինտելիգենցիայի» գործունեությունը վերահսկելի դարձնելու համար:

Յուրաքանչյուր ստեղծագործական միություն գործում էր առաջնորդվելով համապատասխան կանոնադրությամբ: Համաձայն ստեղծագործական միությունների կանոնադրության՝ ստեղծագործական միությունների գործունեությունը կապված էր քաղաքացիների մշակութային ակտիվության, «ինքնուրույն» գործունեության և նրանց ստեղծագործական պահանջմունքները բավարարելու հետ:

Ստեղծագործական միությունների գործունեության մեջ էր մտնում իր անդամների համար ստեղծագործական մրցույթների կազմակերպումը: Կանոնադրության մեջ էր ներառված ստեղծագործական միությունների հիմնական գործունեության ձևերը՝ բաց մրցույթներ, ստեղծագործական զրույցքննարկումներ, զեկույցներ և բանավեճեր, նոր ստեղծագործությունների քննարկումներ և այլն: Ստեղծագործական միություններ ընդունում էին դիմումի հիման վրա, որին կցված էր տվյալ միության երեք անդամների կարծիքները: Գրողների միության անդամ դառնալու համար գրողը պետք է երկու տպագրված գիրք ունենար, նկարչի դեպքում նա պետք է ներկայացներ իր գեղարվեստական ստեղծագործությունները կամ արվեստի գործերը, ճարտարապետը պետք է ունենար իր կողմից կառուցված շինություն կամ հետազոտություն ճարտարապետության ոլորտում[8]:

Ստեղծագործական միությունների անդամները պարտավոր էին ստեղծագործել պետական պատվերի մեխանիզմով, նպաստել մասսայական գիտակցության ձևավորմանը և ստեղծել «ձևով ազգային, բովանդակությամբ խորհրդային (պրոլետարական) մշակույթ»: Ստեղծագործական միությունների անդամներին կարող էին հեռացնել ստեղծագործական կանոնադրության, նպատակներին և խնդիրներին չհամապատասխանող գործունեություն ծավալելու համար, հակախորհրդային կամ հակահասարակական գործունեության համար, նաև այն դեպքում, եթե միության անդամը երկար ժամանակ չէր մասնակցում միության գործունեությանը:

Ստեղծագործական միությունների անդամ արվեստագետներն ունեին որոշակի լիազորություններ և օգտվում էին իշանությունների՝ իրենց տրված «բարիքներից», դրա փոխարեն լոյալ մնալով խորհրդային գաղափարներին և հաստատված սկզբունքներին: Այդ արտոնություններն իրենց մեջ ներառում էին ստեղծագործելու համար բարվոք պայմանների ստեղծում, արհեստանոցների ձեռք բերում անվճար հիմունքներով, հանգստյան տների ցանցի ձևավորում, նյութական աջակցություն, հրատարակությունների աճ և այլն [**10**]:

Կանոնադրության համաձայն ստեղծագործական միությունները ձեռք էին բերել իրավաբանական անձի կարգավիճակ: Նրանք կարող էին ձեռք բերել տարածքներ, շինություններ և այլ գույք, կնքել պայմանագրեր, ստանալ ֆինանսական միջոցներ, ունենալ հաշիվներ: Ստեղծագործական միությունները ազատված էին պետական և տարածքային հարկերից, տուրքերից և գույքահարկից: Ստեղծագործական միություններն ունեին իրենց մարզային մասնաճյուղերը: Ստեղծագործական միությունների ձևավորման անհրաժեշտությունը, այս կառույցների իրական նպատակները և խնդիրները տարբերվում են վերջիններիս կանոնադրության մեջ սահմանված նպատակներից և խնդիրներից:

Ստեղծագործական հիմնական մեթոդը՝ սոցռեալիզմ

Գրողների և նկարիչների միությունների կանոնադրության մեջ իբրև հիմնական ստեղծագործական մեթոդ էր ներկայացվում սոցիա-

միություն», «Հոկտեմբեր», «Նոյեմբեր», Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա», «Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիա»), Հայաստանի գրողների միությունը, որպես բաղկացուցիչ մաս, ստեղծվել է ԽՍՀՄ գրողների միության հետ միաժամանակ՝ 1934 թվականի օգոստոսին: Հիմնադիր համագումարում վարչության նախագահ է ընտրվել Դրաստամատ Սիմոնյանը: Հայ գրողների պատվիրակությունը Մոսկվայում մասնակցել է ԽՍՀՄ գրողների միության առաջին հիմնադիր համագումարին: 1939 թվականի սեպտեմբերին Հայաստանում նշվել է «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակը, այդ կապակցությամբ Երևանում տեղի է ունեցել ԽՍՀՄ գրողների միության վարչության համագումար (պլենում): 1941 թվականի մայիսի 10-ից 20-ը Մոսկվայում կայացել է հայ գրականության տասնօրյակ: Հայրենական պատերազմին մասնակցել են 50-ից ավելի հայ գրողներ: 1930-ական թվականներին խորհրդահայ մշակույթի զարգացման տեսանկյունից իր ներդրումն է ունեցել ԽՍՀՄ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունովը (Հարությունյանը), ով իր պաշտոնը ստանձնել էր 1937 թվականին:

[7] Հետագայում հավելվեցին կինեմատոգրաֆիստների (1957) և թատերական գործիչների միությունները (1940):

[8] Նույն տեղում:

լիստական ռեալիզմը [**14**]: Սոցիալական ռեալիզմի հաստատումն անհրաժեշտ էր խորհրդային պետության ղեկավարությանը, առաջին հերթին իր քաղաքականությունն առավել հիմնավորված, նպատակաուղղված, փաստարկված քարոզելու համար, երկրորդը 1920-30-ական թվականներին ստեղծված մշակութային կառույցների գործունեությունը համակարգելու և վերահսկելու անհրաժեշտությամբ:

«Սոցիալիստական ռեալիզմ» եզրույթն առաջին անգամ հայտնվել է 1923 թվականին «Լիտերատուրնայա գազետա» թերթի համարներից մեկում: Թերթը զետեղել է «Ապահովենք գրական խմբակների ստեղծագործական գործունեության բոլոր պայմանները» տեղեկատվությունը, որտեղ նշվել է, որ Մոսկվայի գրական խմբակների կազմակերպության նիստերին գրողների միության կազմկոմիտեի նախագահ Իվան Գրոնսկին[9] իր ելույթում մասնավորապես ասել է. «Մեթոդի մասին հարցն անհրաժեշտ է վերացականորեն չներկայացնել, այդ գործին չմոտենալ այնպես, որ գրողը նախ պարտադրաբար անցնի դիալեկտիկական մատերիալիզմի դասընթացները, հետո նոր ստեղծագործի: Գրողներին առաջադրվող հիմնական պահանջն է՝ գրել ճշմարտության մասին, ճշմարտացիորեն արտացոլել մեր իրականությունը, որ ինքնին դիալեկտիկական է: Ուստի խորհրդային գրականության հիմնական մեթոդը սոցիալիստական ռեալիզմն է» [**8**, c. 76]: Սոցռեալիզմը որպես ստեղծագործական մեթոդ ենթադրում էր, որ մշակութային գործիչները, արվեստագետները պարտավոր են իրենց արվեստի միջոցով ներկայացնել սոցիալիստական իրականությունը, որն ապացուցում էր, թե պրոլետար խավը ինչքան լավ պայմաններում է ապրում, ինչ կատարյալ համակարգ է սոցիալիզմը, ներկայացնել սոցիալիզմի «լուսավոր» գծերը:

Խորհրդային միության յոթ տասնամյակի գոյության ընթացքում սոցռեալիզմը մնաց հիմնական ստեղծագործական մեթոդը, բայց առավել խիստ գրաքննության էր ենթարկվում հատկապես 1930-1940-ական թվականներին, երբ իշխանության գլուխն էր Ի. Ստալինը: Ստալինը հիմք դրեց մշակույթի միջոցով քաղաքական-գաղափարական խնդիրներ լուծելու խորհրդային պրակտիկային, որը շարունակվեց Հայաստանում նաև խորհրդային կարգերի փլուզումից հետո:

Ստեղծագործական միությունների գործունեությունը Հայաստանի անկախության շրջանում

Խորհրդային միության փլուզմանը հաջորդած տնտեսական և սոցիալական ճգնաժամը Հայաստանում ուղեկցվում էր տարատեսակ մշակութային հաստատությունների քայքայմամբ, ապալեգիտացմամբ, հեղինակազրկմամբ: 1990-ական թվականների երկրորդ կեսին սկսված գլոբալ զանգվածային մշակույթի ներխուժմանը, ժամանցի արդյունաբերության առաջացումը և սպառողական արժենքների ու նորմերի տարածումն ուղեկցվում էր նոր տիպի մշակութային հաստատությունների ձևավորմամբ [**3**]:

Խորհրդային միության փլուզումից հետո արմատական փոփոխությունների ենթարկվեցին հասարակական, քաղաքական և մշակութային կյանքի կազմակերպման սկզբունքները: Անկախություն ձեռք բերելուց անմիջապես հետո կառավարությունը՝ երկրի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ որդեգրեց ազատական քաղաքականություն: Տնտեսության անցումը պլանայինից շուկայականի ընթացավ մասնավոր սեփականության ձևավորման գործընթացով: Կենտրոնացված պետական մշակութային քաղաքականությունից անցումը լիբերալ-ազատական մոդելի ընթացավ մի շարք բարդություններով և խնդիրներով: ԽՍՀՄ փլուզումից հետո մշակութային օջախները գտնվում էին բարձիթողի վիճակում: Գործարաններն այլևս չէին աշխատում, ուստի դադարել էին գործել նաև նրանց կից մշակույթի ակումբները, խմբակները: Երկրում տարվող ազատականացման և անհատականացման քաղաքականությունը ուղեկցվում էր մշակութային հաստատությունների սեփականաշնորհման և մշակութային կառույցների ապապետականացման գործընթացներով: Սույն փոփոխությունների արդյունքում ստեղծագործական միությունները մի շարք խնդիրների առաջ կանգնեցին, ինչը խանգարում էր նրանց վերակազմմանն ու վերակառուցմանը՝ անկախության սկզբունքներին համապատասխան:

Խնդիր 1. Առաջին խնդիրը վերաբերում է ստեղծագործական միությունների կարգավիճակին. ՀՀ անկախացումից մինչ օրս առանձին օրենքի միջոցով չի ամրագրվել ստեղծագործական միությունների կարգավիճակը: Այսօր ստեղծագործական միությունները գործում են իբրև հասարակական կազմակերպություններ և նրանց գործունեությունը կարգավորվում է

[9] Գրոնսկի Ի. Մ. (1884-1985) – խորհրդային հասարակական գործիչ, լրագրող, գրականագետ: 1930-ական թվականներին Ի. Ստալինի վստահված անձն էր, Խորհրդային գրողների միության կազմկոմիտեի նախագահը: 1939 թ. ամռանը ձերբակալվել է: 16 տարի անցկացրել է ճամբարներում և աքսորում:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով[10]: Սույն օրենքով (հոդված 4) ամրագրված են հասարակական կազմակերպությունների գործունեության սկզբունքները, այդ թվում՝ օրինականությունը, հրապարակայնությունը, անդամության կամավորությունը, անդամների իրավահավասարությունը, ինքնակառավարումը, ղեկավարման կոլեգիալությունը: Օրենքը (հոդված 15) մասնավորեցնում է, թե նման կազմակերպությունները ինչ գործունեություն կարող են ստանձնել իրենց նպատակներն իրականացնելու համար, այդ թվում՝ իր գործունեության մասին տեղեկատվություն տարածել, կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր, օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերը[11]: Ստեղծագործական միությունների նախագահները, անդամներ պարբերաբար բարձրացնում էին իրենց գործունեությունը օրենսդրորեն կարգավերլու անհարժեշտությունը: Նման փորձ եղավ 2003 թվականին. ԱԺ ներկայացվեց «ստեղծագործական աշխատողների և ստեղծագործական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը[12]: Օրենքի նախագիծը սահմանում էի ստեղծագործական աշխատողների, ստեղծագործական միությունների կարգավիճակը, նրանց գործունեության հասարակական բնույթը, կանոնադրությունը, անվանակոչումը և այլն: Սույն օրենքը վերաբերում էր, ոչ միայն խորհրդային կաղապարով ձևավորված ստեղծագործական միություններին, այլ ընհանրապես անկախության շրջանում ձևավորված և ապագայում ձևավորվող բոլոր ստեղծագործական կազմակերպություններին: Սույն օրենքի նախագիծը չընդունվեց, ուստի ստեղծագործական միությունների գործունեությունը կարգավորվում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով:

Խնդիր 2. Երկրորդ խնդիրը կապված է կարգավիճակի փոփոխության հետ: Ստանալով հասարակական կազմակերպության կարգավիճակ՝ ստեղծագործական միությունները զրկվեցին պետական հովանավորչությունից, պետական ֆինանսավորումից և այլևս պետք է մշակեին իրենց ինքնաֆինանսավորման մոդելը, որը թույլ կտար ստեղծված պայմաններում բովանդակային փոփոխությունների ենթարկվել: Ինքնաֆինանսավորման մեխանիզմը ստեղծագործական միություններում առաջացրեց խնդիրներ. չկարողանալով հարմարվել նոր շուկայական հարաբերությունների թելադրանքին, զանազան այլ մշակութային կառույցների ձևավորման արդյունքում ստեղծված մրցակցության պահանջներին, ստեղծագործական միությունների անդամները սկսեցին լքել անդամակցությունը և անհատապես ներգրավվել մշակույթի ոլորտ և «մշակութային շուկա»[13]:

Խնդիր 3. Հաջորդ խնդիրը կապված է ստեղծագործական միությունների կանոնադրական փոփոխությունների հետ: Հայաստանի անկախացումից հետո միությունները չկարողացան վերակազմավորվել ստեղծված նոր պայմանների համաձայն և կանոնակարգել իրենց գործունեությունը[14]: Ներկայիս ստեղծագործական միությունների կանոնադրությունները զուտ տեխնիկական շտկումների ենթարկված, խորհրդային շրջանից «ժառանգված» կանոնադրություններն են: Այսօրվա ժողովրդավարական պայմաններում ստեղծագործական միությունների դերակատարությունը, նրանց ունեցած գործառութային կարևորությունը հստակ ձևակերպում չունի. նրանք կորցրեցին իրենց՝ մշակույթի ոլորտը, մշակութային մտավորականությանը կարգավորելու և վերահսկելու հիմնական մեխանիզմները, ինչն էլ խորհրդային շրջանում նրանց տալիս էր արտոնություններ:

Խնդիր 4. Ստեղծագործական միությունների շուրջ ծավալված պետական հիմնական խոսույթը կապված է եղել այս հաստատությունների անվան փոփոխության հետ: Թե° պետական, թե° հանրային քննարկումներն ավելի շատ ֆորմալ բնույթ ունեն, քան բովանդակային: Խորհրդային միության փլուզումից հետո պետական ստատուսը կորցրած այս հաստատություններն օրենքով ամրագրվեցին որպես հասարակական կազմակերպություններ:

[10] Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենք // https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=110802

[11] Նույն տեղում:

[12] ՀՀ օրենքի նախագիծը «ստեղծագործական աշխատողների և ստեղծագործական միությունների մասին», Պ-694-23.09.2005-ԳԿ,ՊԻ-010/0 // http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=1334&Reading=0&lang=arm&enc=utf8

[13] ԴԱՆ, հարցազրույց նկարիչների միության անդամների հետ, 25.02.2018:

[14] Ըստ նկարիչ, քանդակագործ Տիգրան Արզումանյանի՝ «... ստեղծագործական միությունների ձևն ու աշխատանքի որակը հիմնովին պետք է փոխվի: Գրողներին, կոմպոզիտորներին, մյուս ստեղծագործողներին վերև բարձրացնելու միջոցը միայն ստեղծագործական միություններն են, մշակույթի նախարարությունը պետք է նրանցից սնվի, նրանցից իմանա՝ ովքեր են լավ, արժանի ստեղծագործողները, որպեսզի ուշադրության արժանան»// առավել մանրամասն տես՝ Ստեղծագործական միությունների ձևն ու աշխատանքի որակը պետք է փոխվի // https://www.panorama.am/am/news/, 26.09.2016:

2014 թվականի հուլիսի 26-ից ուժի մեջ են մտնել «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում Ազգային ժողովի կողմից նույն թվականի հունիսի 20-ին ընդունված փոփոխությունները, որոնք միտված են ավանդական ստեղծագործական և մշակութային կազմակերպությունների նպատակային գործունեության խթանմանը: Ստեղծագործական միությունները, որոնք «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի ընդունմամբ վերակազմակերպվեցին որպես հասարակական կազմակերպություններ, կորցնելով հանրային ճանաչում և հեղինակություն ձեռք բերած իրենց «ստեղծագործական միություն» անվանումը կրելու մենաշնորհային իրավունքը, օրենքում ընդունված փոփոխություններից հետո հնարավորություն ստացան իրենց անվանման մեջ օգտագործել «միություն» բառը: Մեկ այլ փոփոխությամբ ՀԿ-ներին, այդ թվում՝ ստեղծագործական միություններին, հնարավորություն ընձեռնվեց իրենց հերթական ժողովները հրավիրել չորս տարին մեկ պարբերականությամբ՝ մինչ այժմ գործող երկու տարին մեկի փոխարեն [**7**]:

Խնդիր 5. ՀՀ անկախացումից ի վեր ազատ դեմոկրատական հարաբերությունների հաստատումը, նոր շուկայական հարաբերությունների ձևավորումը խթանեցին մշակույթի ոլորտում բազմաթիվ միությունների, ստեղծագործական խմբերի ձևավորմանը, անհատների մշակութային գործունեության ծավալմանը, միջազգային մշակութային կապերի ակտիվացմանը: Ստեղծագործական միությունների գոյության անհրաժեշտությունը սկսվեց քննարկման առարկա դառնալ թե° պետական, թե° մասնավոր հարթակներում[15]:

Ըստ կոմպոզիտորների միության նախագահ Ա. Սաթյանի. «... միությունները պահպանում են ազգային մշակույթը: Այն, ինչ որ բնորոշ չէ այլ կազմակերպություններին, որոնք այսօր և՛ ֆինանսավորվում են, և՛ կարողանում են իրենց քաղաքականությունն անցկացնել մեր այսօրվա իրականության մեջ: Ես կարծում եմ, որ միությունները պետք է ունենան որոշակի ֆոնդեր: Ստեղծագործական միությունները հասարակական կազմակերպություններ են և իրավունք չունեն ֆինանսներ աշխատել: Ու հանկարծակի այդ հասարակական կազմակերպությունները, որը ներկայացնում է մշակույթը, ներկայացնում է աշխարհին, փորձում է մտածել ազգային մշակույթի մասին, նա չի ֆինանսավորվում ընդհանրապես» [**5**]:

Խնդիր 6. Հաջորդ խնդիրը կապված է ստեղծագործական միություններում կապիտալների փոխակերպման, դրանց մոբիլության հետ. ժամանակակից պայմաններում ստեղծագործական միությունները դարձել են որոշ անհատների ամբիցիաների բախման վայր: Այսպես օրինակ՝ 2013 թ. գրողների միության նախագահի ընտրությունը բավականին աղմուկով ընթացավ, սրա հետևանքով միության անդամներից շատերը լքեցին այն: Նույնը կարող ենք տեսնել նաև այլ միությունների օրինակով:

Ստեղծագործական միությունները որոշակի բախումների կիզակետում են հայտնվում նաև, քանի որ նրանց ենթակայության տակ են գտնվում մի շարք շինություններ՝ հանգստյան տներ, հյուրանոցներ, որոնք այժմ սպասարկման ոլորտում ծառայություններ են մատուցում, ինչն էլ ցույց է տալիս, որ այդ միությունների նախագահությունը զբաղված է առավել վարչարարական գործունեությամբ, քան թե ստեղծարարական:

Ամփոփելով խորհրդային ստեղծագործական միությունների կազմավորման, զարգացման և անկման փուլերը, կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի հանրապետության անկախացումից հետո ստեղծված նոր իրավիճակում սույն միությունները հետընթաց ապրեցին, որն ընթացավ երեք փուլերով: Այդ երեք փուլերը կապվում են Հայաստանի երրորդ հանրապետության երեք նախագահական ժամանակաշրջանների հետ:

Առաջին փուլ. Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահության շրջանում (1991-1998 թվականներ) որդեգրված պետական քաղաքականությունը նվազագույն միջամտություն էր ցուցաբերում մշակույթի ոլորտի, մշակութային գործընթացների մեջ, որի հետևանքով մշակութային ինստիտուտների, այդ թվում նաև ստեղծագործական միությունների «ապապետականացման» գործընթաց էր սկսվել: Այստեղ կարևոր է նաև նշել նախագահի՝ որպես երկրի առաջնորդի և մշակութային քաղաքականութ-

[15] 2016 թվականի մարտի 2-ին, Ազգային ժողովում քննարկվեց ստեղծագործական միությունների լիկվիդացիայի և դրանց իրավաբանական կարգավիճակի հարցը: Մեջբերում գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի խոսքից. «Այն ամենն, ինչ ստեղծվել է ժամանակի ընթացքում, պատմություն է: Մենք, վերջապես, պետք է հարգենք ինքներս մեզ, մեր ստեղծած պատմությունը: Ստեղծագործական միությունները հասարակական կազմակերպություններ են, նրանց գործունեության համար պետական որևէ միջոց չի ծախսվում, մենք ինքներս մեզ պահում ենք: Մենք ենք ստեղծել այս ամեն ինչը: Ինչ-որ մեկը մտածում է արդյո՞ք, թե այդ բոլոր հասարակական կազմակերպություններն ինչով են զբաղվում: Դրա համար էլ պետք է նշեմ, որ ստեղծագործող մարդիկ կամ ստեղծագործական միություններն իրենք են որոշում՝ ի՞նչ անել կամ չանել» // առավել մանրամասն տես՝ «Ստեղծագործող մարդիկ կամ ստեղծագործական միություններն իրենք են որոշում ինչ անել կամ չանել» // http://yerkirmedia.am/social/steghcagorcakan-miutyunner/, 18.03.2016:

յան թելադրողի անձանական մշակութային կապիտալը[16] և դրա ունեցած ազդեցությունը նրա որոշումների կայացման մեջ: Լևոն Տեր-Պետրոսյանի որդեգրած մշակութային քաղաքականության զարգացման տեսլականը հենվում էր լիբերալ-ազատական մոդելի վրա, ըստ որի անհրաժեշտ էր մշակույթի ոլորտի ազատականացում, մրցակցային շուկայի ձևավորում և ինքնաֆինանսավորման մեխանիզմների մշակում: Հետևաբար 1990-ական թվականներին մշակութային հաստատությունների «ապապետականցմանը» զուգահեռ ընթանում էր մշակութային մասնավոր կառույցների ձևավորումը:

Երկրորդ փուլ. 1998 թվականից իշխանության եկած Ռոբերտ Քոչարյանը մշակութային քաղաքականության մեջ փորձեց վերականգնել նախկին խորհրդային ամբողջատիրական համակարգին բնորոշ գծերը, ինչպես օրինակ մշակույթի պետական ֆինանսավորումը, հոգածությունը որպես պետության պարտականություն և մշակույթի գործիչների լոյալությունը իշխանությունների հանդեպ: Ռ. Քոչարյանի վարած քաղաքականությունը մշակույթի ոլորտում մոտ էր պետական-բյուրոկրատական մոդելին, որտեղ մշակույթը փորձում է իր բոլոր ռեսուրսներով ծառայել իշխանություններին՝ փոխարենը ստանալով հոգածություն և համեմատաբար կայուն զարգացման տեսլական: Պատահական չէ, որ մշակույթի ոլորտի օրենսդրական կարգավորումները սկսվեցին 2000-ական թվականներից: 2003 թվականին մշակվեց ստեղծագործական միությունների և ստեղծագործական աշխատողների մասին հատուկ օրենք[17]: Այս փուլում ստեղծագործական միությունների որոշ առումով վերականգնեցին իրենց նախկին նշանակությունը հասարակական գործընթացների մեջ, սկսեցին զանազան պարգևատրումներ և ֆինանսական աջակցություն ստանալ պետության կողմից:

Երրորդ փուլ. ՀՀ երրորդ նախագահի իշխանության տարիներին փորձ արվեց մշակութային քաղաքականության լիբերալ-ազատական և պետական բյուրոկտարական մոդելները համադրել, որի արդյունքում մշակութային քաղաքականությունն իր հիմնական դրսևորումներով մնաց պետական, բայց մասնավոր ոլորտի ակտիվ մասնակցության ներառմամբ: Ստեղծագործական միությունները դուրս եկան մրցակցային դաշտ՝ պայքարելով իրենց գոյության համար:

Այսօր արդեն կարելի է խոսել ՀՀ մշակութային քաղաքականության չորրորդ փուլի մասին, որն սկսվում է «թավշյա հեղափոխությունից»՝ 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներից: Սա արդեն հետազոտության այլ թեմա է, որին կանդրադառնանք հաջորդ հոդվածում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Եղիազարյան Ա. Կ.,** Գրական կյանքը Հայաստանում 1920-ական թվականներին և «Նոյեմբեր» միօրյա թերթը // http://lraber.asj-oa.am/2716/1/1995-2(30).pdf [Yeghiazaryan A. K., Grakan kyanqy Hayastanum 1920-akan tcakannerin ev “Noyember” mioria terty]
2. «Ստեղծագործող մարդիկ կամ ստեղծագործական միություններն իրենք են որոշում ինչ անել կամ չանել» // http://yerkirmedia.am /social/steghcagorcakan-miutyunner/, 18.03.2016:
3. **Բայադյան Հ.,** Մշակութային գործունեության և մշակութային քաղաքականության նոր ասպարեզներ, հունիսի 30, 2008, 23:06, www.hetq. am. [BayadyanH., mshakutayin gorcuneutyan ev mshakutayin qaxaqakanutyan nor asparezner]
4. Հայաստանի գրական գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին // «Խորհրդային Հայաստան», 12 մայիսի, 1932, № 111:
5. **Սաթյան Ա.,** Ստեղծագործական միությունները պետք է ունենան որոշակի ֆոնդեր // https://www.azatutyun.am/a/27455638.html, 29.12.2015: [Satyan A., Steghtsagortsakan miutyunnery petq e unenan voroshaki fonder]
6. Ստեղծագործական միությունների ձևն ու աշխատանքի որակը պետք է փոխվի // https://www.panorama.am/am/news/, 26.09.2016:

[16] Հայաստանի երրորդ հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը 1970-1980-ական թվականներին գիտական բուռն գործունեություն է իրականացրել: Եղել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, վարել է մատենադարանի գիտական-քարտուղարի պաշտոնը, միաժամանակ լինելով «Բանբեր Մատենադարանի» հանդեսի խմբագրական մարմնի անդամ և պատասխանատու քարտուղար: 1985-ից՝ նույն հաստատության ավագ գիտաշխատող է, դասավանդել է Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում: Լևոն Տեր-Պետրոսյանը անդամ է ԽՍՀՄ արևելագետների ընկերակցության (1985), Հայաստանի գրողների միության (1988), Ֆրանսիական Ասիական ընկերության (1989), Վենետիկի Մխիթարյան ակադեմիայի (1991), պատվավոր դոկտոր (լատ.՝ doctor honoris causa) Լա Վեռնի (1990), Ստրասբուրգի (1992), Սոֆիայի (1994) և Սորբոնի (1996) համալսարանների: Հեղինակել է 30-ից ավելի գրքերի, շուրջ 80 գիտական հոդվածների և բազմալեզու մամուլում սփռված քաղաքական բնույթի հազարավոր հրապարակումների:

[17] ՀՀ օրենքը ստեղծագործական աշխատողների և ստեղծագործական միությունների մասին, http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=1334&Reading=0&lang=arm&enc=utf8

7. Ստեղծագործական միություններին հնարավորություն է ընձեռվում անվան մեջ օգտագործել «միություն» բառը // https://www.pastinfo.am/hy/news/, 21.07.2014:
8. **Борев Ю.** Социалистический реализм: взгляд современника и современный взгляд, М., 2008, с. 76. [Borev Yu., Socialisticheski realism: vzglyad sovremennika i sovremennih vzglyad, M.]
9. **Бурдье П.,** Формы капитала. Электронный журнал «Экономическая социология». Ред. журнала Радаев В. Том 3, № 5, ноябрь 2002. Электронный журнал, www.ecsoc.msses.ru. [Burde P. Formi kapitala. Elektronnih jurnal "ekonomicheskaya sociologia"]
10. Законодательство об авторском праве. Общая характеристика и принципы // http://www.pravo.vuzlib. su/book_z920_page_5.html 03.04.2017.
11. Постановление Политбюро ЦК ВКП(б) "О перестройке литературно-художественных организаций" *23 апреля 1932 г. //* Власть и художественная интеллигенция. Документы ЦК РКП(б) — ВКП (б), ВЧК — ОГПУ — НКВД о культурной политике. 1917-1953. Под ред.А.Н.Яковлева. Сост. А.Н. Артизов, О.В.Наумов. М.: Международный фонд "Демократия", 1999, стр. 172-173.
12. Постановление Политбюро ЦК ВКП(б) "О перестройке литературно-художественных организаций" Постановления Оргбюро Цк Вкп(Б) О Мероприятиях По Выполнению Постановления Политбюро Цк Вкп(Б) "О Перестройке Литературно-Художественных Организаций" 7 Мая 1932 *г. //* Власть и художественная интеллигенция. Документы ЦК РКП(б) — ВКП (б), ВЧК — ОГПУ — НКВД о культурной политике. 1917-1953. Под ред.А.Н. Яковлева. Сост. А.Н.Артизов, О.В.Наумов. М.: Международный фонд "Демократия", 1999.
13. **Работяжев Н. В.,** Политическая система тоталитаризма: структура и характерные особенности, Вестник московского университета, сер. «Политические науки», № 1, М., 1998 г. [Rabotyajev H. V., Politicheskaya sistema totalitarizma: struktura I xarakternie osobennosti, Vestnik moskovskogo universiteta, ser. "Politicheskie nauki" N 1, M, 1998]
14. **Цыкунов Г. А., Шашкова Т. В.,** Правовые основы деятельности творческих союзов Иркутской области в 1930–1950-х гг. // https://cyberleninka.ru /article/n/pravovye-osnovy-deyatelnosti-tvorcheskih-soyuzov-irkutskoy-oblasti-v-1930-1950-h-gg/viewer, 2014. [Cikunov G. A, Shashkova T. V., Pravovie osnovi deyatel'nosti tvorcheskix coyuzov Irkutskoh oblasti v 1930-1950-x gg]
15. **Гершзон. М. М.** «Оттепель». Изменения в культурной политике СССР в 1953 — начале 1956 гг.: кино, театр, изобразительное искусство и книгоиздание // Исследования по истории русской мысли, М., 2018.[Gershzon M. M., "Ottepel" Izmeneniya v kul'turnoh politike SSSR v 1953-nachale 1956 gg, kino, teatr, izobrazitel'noe iskusstvo I knigoizdanie // M., 2018]

Сдана/Հանձնվել է՝ 19.02.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 25.02.2020
Принята/Ընդունվել է՝ 29.02.2020